

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/3

4 հունիսի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Արմեն Կարապետյանի 25.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի 15.01.2014 թ-ի թիվ 1411519 վարչական ակտի դեմ:

Արմեն Կարապետյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի կողմից 15.01.2014 թ-ին կազմվել է թիվ 1411519 վարչական ակտը, որով արձանագրվել է, թե իբր Արմեն Կարապետյանը զբաղվել է ապօրինի ձեռնարկատիրությամբ, և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք՝ 200.000 դրամի չափով, ինչպես նաև վնասի հատուցում՝ 50.000 դրամի չափով: Ակտում մասնավորապես նշված է հետևյալը. «27.12.2013 թ-ին իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Արմեն Կարապետյանն առանց պետական գրանցման ք.Սևան, շուկայի տարածքում 2013 թ-ի դեկտեմբերի 23-ին զբաղվել է տարադրամի առք ու վաճառքով, մասնավորապես վաճառել է 73 ԱՄՆ դոլար, ստանալով 30.000 դրամի գումար»:

Ակտով ընդհանուր առմամբ առաջադրվել է 250.000 դրամ գումար:

Արմեն Կարապետյանը գտնում է, որ վարչական ակտը կազմվել է խախտումներով, դրանով իր վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, հետևաբար այն պետք է չեղյալ համարել հետևյալ պատճառաբանությամբ.

2013 թ-ի դեկտեմբեր ամսին Սևանի քաղաքի շուկայի հարևանությամբ Արմեն Կարապետյանը կանգնած է եղել: Արմեն Կարապետյանը մտադրություն է ունեցել պարզելու, թե քաղաքացիներն ընդհանրապես շուկայի տարածքում տարադրամ փոխանակում են, թե ոչ, այդ գործը եկամտաբեր է, թե ոչ, որից հետո միայն օրենքով սահմանված կարգով վարձակալությամբ վերցնի մի տաղավար և իրականացնի նման գործունեություն՝ հնարավորության դեպքում նաև այլ առևտրային գործունեություն:

Այդ մտքերով տարված հանկարծ մոտեցել է մի քաղաքացի և հարցրել, թե բացի դիմացի բանկից, որտեղ հերթ է, որտեղից կարող է դոլար ճարել: Արմեն Կարապետյանը ասել է, որ իր մոտ 73 դոլար կա, կարող է այն դրամով փոխել: Քաղաքացին տվել է 30000 ՀՀ դրամ, որի դիմաց Արմեն Կարապետյանը տվել է 73 ԱՄՆ դոլար գումար: Արմեն Կարապետյանի մտքով անգամ չի անցել, որ իր այդ մեկանգամյա դոլարի վաճառքը, ավելի ճիշտ փոխանակումը, կարող էր դիտվել որպես ապօրինի ձեռնարկատիրություն: Արմեն Կարապետյանը հարկ է համարում նշել նաև, որ տարածքում մշտապես հերթապահում են ոստիկանության աշխատակիցները:

Դրանից անմիջապես հետո մոտեցել են Սևանի Ոստիկանության աշխատակիցները և առաջարկել համապատասխան բացատրություն գրել: Արմեն Կարապետյանն ինչպես եղել էր, այդպես էլ գրել է:

Մոտ մեկ ամիս անց Արմեն Կարապետյանին կանչել են նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի և ասել, որ ՀՀ Ոստիկանության Սևանի բաժնից նյութեր են ստացվել, որի հիման վրա ակտ պետք է կազմվի: Արմեն Կարապետյանը չի իմացել, որ ակտով պարտավորություն պետք է առաջադրվի:

Ակտը կազմելիս գործի փաստական հանգամանքներն ընդհանրապես հաշվի չեն առնվել: Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Արմեն Կարապետյանը տարադրամի փոխանակման գործունեություն որպես այդպիսին չի իրականացրել: Իր կողմից մեկանգամյա տարադրամի փոխանակումը չէր կարող դիտվել որպես արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն, առավել ես, որ ինչպես ակտում է նշվել, ընդամենը մեկ օր և այն էլ մեկ անգամ է տարադրամ փոխանակել:

Ըստ Արմեն Կարապետյանի, հետագայում այդպիսի գործունեություն իրականացնելու իր մտադրությունը, չէր կարող դիտվել որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացում:

Ակտում նշվել է, որ ակտը կազմող աշխատակիցներն իրականացրել են օպերատիվ հետախուզական միջոցառումներ և դրա արդյունքում պարզել են, որ իբր առանց պետական գրանցման իրականացրել է գործունեություն: Այնինչ, ակտը կազմելու համար ոչ մի օպերատիվ հետախուզական միջոցառում չի անցկացվել, այլ ակտը կազմելու համար հիմք է ընդունվել ընդամենը ՀՀ Ոստիկանության Սևանի բաժնի կողմից տրամադրված նյութերը:

Արմեն Կարապետյանը կարծում է, որ սույն ակտը կազմելիս իր նկատմամբ առաջադրվել են հարկային պարտավորություններ մի բանի համար, որը չի կատարել: Բացի այդ, վարչական ակտը կազմելիս խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝ 55-րդ հոդվածի 1-ի կետի ա) ենթակետի, 37-րդ հոդվածի դրույթները:

Արմեն Կարապետյանը կարծում է, որ վարչական ակտը կազմելիս խախտվել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.01.2012թ թիվ 22-Ա հրամանով հաստատված ընթացակարգի 17-րդ կետի պահանջները:

«Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը բազմիցս մեկնաբանվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի 1161 (ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թ-ի որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով Արմեն Կարապետյանը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի 15.01.2014 թ-ի թիվ 1411519 վարչական ակտը չեղյալ համարել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ.Գալոյանի 26.12.2013 թ-ի թիվ 1411519 որոշման համաձայն և հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնի պետի 24.12.2013 թ-ի թիվ 55/16-5734 գրությամբ տրամադրված նյութերը, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության 30-րդ բաժնի օպերիվագորներ Տիգրան Առաքելյանը և Հարություն Հովհաննիսյանը ք.Սևան, Գործարանային 4, բն. 17 հասցեի բնակիչ Արմեն Կարապետյանի կողմից օրենքով սահմանված կարգով առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեության իրականացման փաստով վերջինիս նկատմամբ 27.12.2013 թ-ին իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ Արմեն Կարապետյանն առանց պետական գրանցման ք.Սևան, շուկայի տարածքում 2013 թ-ի դեկտեմբերի 23-ին զբաղվել է տարադրամի առքուվաճառքով, մասնավորապես՝ վաճառել է 73 ԱՄՆ դոլար ստանալով 30000 դրամ գումար:

Վերոգրյալի արդյունքում խախտվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 3-րդ կետի պահանջները, այն է՝ ՀՀ-ում առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն արգելվում է:

Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի 15.01.2014 թ-ի թիվ 1411519 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 200000 դրամ, ինչպես նաև նույն հոդվածով սահմանված լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում՝ գումարով 50.000 դրամ:

Արմեն Կարապետյանի գանգատում բերված այն փաստարկը, որ վարչական ակտը կազմելու համար հիմք են ընդունվել բացառապես ՀՀ Ոստիկանության Սևանի բաժնի կողմից տրամադրված նյութերը, չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես,

վարչական վարույթի ընթացքում 27.12.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակից օ/լ S.Առաքելյանն Արմեն Կարապետյանից վերցրել է բացատրություն:

Բացատրությունում Արմեն Կարապետյանը մասնավորապես նշել է, որ մշտական աշխատանք չունենալու պատճառով և ֆինանսական ծանր վիճակից ելնելով ամանորյա տոները նշելու նպատակով 2013 թվականի դեկտեմբերի 23-ին զբաղվել է տարադրամի փոխանակմամբ:

Ըստ բացատրության, 2013 թվականի դեկտեմբերի 23-ին Արմեն Կարապետյանն ընկերոջից վերցրել է 175 ԱՄՆ հոլար, այն վաճառելու համար: Այդ օրը ժամը 12:00-ի սահմաններում եկել է քաղաքային շուկա տարադրամը փոխանակելու նպատակով: Ժամը 14:40-ի սահմաններում իրեն է մոտեցել մի քաղաքացի և գնել 73 ԱՄՆ դոլար, որի դիմաց Արմեն Կարապետյանը վերցրել է 30.000 դրամ: Արմեն Կարապետյանը նշել է նաև, որ հիշատակված գործունեությամբ նախկինում չի զբաղվել, հարկային մարմնում հաշվառված չէ և չունի համապատասխան լիցենզիա:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) կամ հարկային մարմիններում չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ (ապօրինի գործունեություն) զբաղվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից»:

Քննարկվող դեպքում սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են, որ Արմեն Կարապետյանն առանց պետական գրանցման, առանց հարկային մարմիններում հաշվառման կանգնելու և առանց լիցենզիայի, ինքնուրույն, իր ռիսկով իրականացրել է տարադրամի փոխանակման գործունեություն, որի հիմնական նպատակը հանդիսացել է շահույթ ստանալը: Այսինքն, Արմեն Կարապետյանի կողմից իրականացվել է ապօրինի գործունեություն, որի համար կազմված վարչական ակտով կիրառվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն հրավիրվում է համապատասխան չորոշարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ